ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/05

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 23.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/05 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.05.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 2017թ. մարտի 6-ին հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)՝ թվով 97 չափաբաժիններով, որոնցից՝ թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինները ախտահանիչ միջոցներ են:

Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից Հավելված թիվ 1-ի «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժիններում գրել է «Ջոնսոն և Ջոնսոն Մեդիքալ» ՍՊԸ-ի արտադրության բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցների անվանումները՝ «կամ համարժեք» նշումով, իսկ թիվ 2-րդ չափաբաժնում ոչինչ չի գրել:

Հավելված թիվ 1-ի «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժիններով գրված անվանումները պատկանում են միայն ու միայն «Ջոնսոն և Ջոնսոն Մեդիքալ» ՍՊԸ-ի բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին,

իսկ «Տեխնիկական հատկանիշներ»-ում նշված կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունները պատկանում են միայն այդ բրենդային անվանումներն ունեցող ախտահանիչ միջոցներին, որոնք չեն հանդիպում այլ ֆիրմաների համարժեք ախտահանիչ միջոցների մոտ:

Պատվիրատուն Հավելված 1-ի «Ապրանքի անվանում»-ը սյունակում թիվ 2-րդ չափաբաժնի համար գրել է միայն «Ախտահանիչ նյութեր (քլոր պարունակող ախտահանիչ ինքնալուծվող հաբեր)» բառերը, իսկ նույն հավելվածի «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում չի գրել ոչ մի անվանում՝ «կամ համարժեք» նշումով, սակայն նշված կոնկրետ թվային մեծությունների համադրումը՝ << շուկայում առկա համանման և համարժեք ախտահանիչ միջոցների համապատասխան հատկանիշների թվային մեծությունների հետ, փաստում է, որ Պատվիրատուի կողմից թիվ 2-րդ չափաբաժնով պահանջված ապրանքը կոնկրետ համապատասխանում է 2016թ. սեպտեմբերի 30-ին << առողջապահության նախարարության թիվ 2991-Ա հրամանով հաստատված օգտագործման հրահանգ ունեցող՝ ՌԴ «Ալ-Դեզ» Քիմգործարան ՍՊԸ-ի կողմից արտադրվող «Ժավել Աբսոլյուտ» ախտահանիչ միջոցին:

Ընթացակարգի Հավելված 1-ի թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասով «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում նշված կոնկրետ բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին պատկանող կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունների պահանջները խտրական պայմաններ են ստեղծում «Խաչպար» ՍՊԸ-ի համար, չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում և մրցակցության համար հավասար պայմաններ չեն ապահովում:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

ա) Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ախտանիչ միջոցներ արտադրող «Ջոնսոն և Ջոնսոն Մեդիքալ» ՍՊԸ-ի և ՌԴ «Ալ-Դեզ» Քիմգործարան ՍՊԸ-ի արտադրանքները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ու միայն կոնկրետ այդ արտադրողների՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին և չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ, ինչը ապացուցվել է նաև ԳԲԽ-42/17 բողոքի շրջանակներում:

Պատվիրատուի կողմից՝ կոնկրետ արտադրողի գնման առարկաների հատկանիշները նկարագրելու պարագայում, Հավելված 1-ի թիվ 2 չափաբաժնի մասով «կամ համարժեք» բառերը չգրելը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջին:

բ) Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելը՝ թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասով, հանգեցրել է «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել մասնակիցների համար, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

գ) Պատվիրատուի կողմից գնման գործընթացը կազմակերպվել է խտրական հիմունքներով, ինչը չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ախտահանիչ և լաբորատոր նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասով:

2. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ախտահանիչ և լաբորատոր նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 23.05.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.05.2017թ. թիվ ԴՎԱ/1543 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմվել են համապատասխան ստորաբաժանման կողմից (տվյալ դեպքում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության)՝ հաշվի առնելով այն կարիքների առանձնահատկությունները, որոնց բավարարման համար նախատեսվում է իրականացնել տվյալ ապրանքատեսակների գնումը:

Պատվիրատուի կողմից տարիների ընթացքում կիրառվել են տարբեր տեսակի ախտահանիչ նյութեր և տարիների ընթացքում վերջիններիս արդյունավետության ցուցանիշները հաշվի առնելով ու նկատի ունենալով տարբեր զորամասերի բուժկետերի և հոսպիտալային օղակում դրանց վերաբերյալ մասնագիտական արձագանքներն ու եզրակացությունները, տեխնիկական բնութագրերը կազմելիս՝ պատասխանատու ստորաբաժանումը սահմանել է տվյալ նյութերի այն նվազագույն պարտադիր պահանջները, որոնք անհրաժեշտ են ՀՀ զինված ուժերում հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները պատշաճ կերպով կազմակերպելու և իրականացնելու համար:

Բացի այդ, տեխնիկական բնութագրերում առկա պատասխանատու ստորաբաժանման կողմից պահանջվող նվազագույն թույլատրելի ցուցանիշների սահմանման համար հիմք են հանդիսացել՝ որպես պաշտոնական տեղեկագիր հանդիսացող, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատած մեթոդական հրահանգները:

Տրամաբանական է, որ սահմանված տեխնիկական ցուցանիշները կարող են նաև համընկնել կոնկրետ ապրանքանիշի ապրանքների տեխնիկական ցուցանիշների հետ, ինչը չի նշանակում, որ պատվիրատուն պետք է ձեռք բերի կոնկրետ ապրանքային նշանի ապրանք և հղում է կատարել վերջինիս, քանի որ Ընթացակարգի հրավերով նախատեսվել է դրույթ, որի համաձայն՝ տեխնիկական բնութագրում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված ցանկացած հղման դեպքում, կիրառելի է «կամ համարժեք» արտահայտությունը: Ընդ որում՝ Ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է նաև պահանջվողին համարժեք ապրանքներ մատակարարելու առաջարկ:

Հատկանշական է, որ եթե «Խաչպար» ՍՊԸ-ի պահանջով տեխնիկական բնութագրերը կազմվեին՝ ըստ կազմակերպության կողմից ներկայացվող միջոցների մեթոդական ցուցումների, ապա այդ դեպքում նույնպես տեխնիկական բնութագրերին կհամապատասխանեին միայն խիստ սահմանափակ քանակի կազմակերպությունների առաջարկները, ընդհուպ՝ բացառված չէ, որ կհամապատասխաներ միայն «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկը: Բացի այդ, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված կոնկրետ միջոցների տեխնիկական պայմանները և լաբորատոր փորձագիտական տվյալները հնարավոր է չբավարարեին ՀՀ ՋՈՒ-ի կողմից իրականացվող հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների արդյունավետ կազմակերպմանը, ուստի տարբեր ինֆեկցիոն վարակների դեմ պայքարում ախտահանիչ միջոցների ակտիվ բաղադրատարրերի ակտիվության նվազեցումը կարող է հանգեցնել ոչ միայն այդ վարակիչների տարածմանը, այլև այլ ախտահանիչների նկատմամբ, դրանց կողմից կայունության ձևավորմանը, ինչի հետևանքով պատվիրատուն ստիպված կլինի հետագայում ձեռք բերել շատ ավելի բարձր ակտիվությամբ միջոցներ, որը կհանգեցներ նաև լրացուցիչ ֆինանսական ծախսերի:

Պատվիրատուն սույն գրությամբ նշել նաև, որ «Խաչպար» ՍՊԸ-ն քաջատեղյակ լինելով Ընթացակարգի հրավերի բովանդակությանը, չի օգտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իր իրավունքից և չի պահանջել հրավերի պարզաբանում, այլ այդ նույն ժամանակահատվածում ներկայացրել է բողոք, ինչը նույնպես անընդունելի է, այն դեպքում երբ Ընկերության՝ ժամանակին կատարվելիք քայլերը կարող էին կրել կանխարգելիչ բնույթ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված ախտահանիչ նյութերի տեխնիկական բնութագրերը կազմվել են ՀՀ

գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջներին համապատասխան և դրանք որևէ ձևով չեն հանգեցրել մրցակցության սահմանափակմանը և խտրական պայմաններ չեն ստեղծել մասնակիցների համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 26.05.2017թ. թիվ ԴՎԱ/1543 գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2017թ. մարտի 6-ին հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ թվով 97 չափաբաժիններով, որոնցից՝ թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինները ախտահանիչ միջոցներ են:

2. Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալ ախտահանիչ նյութերի ձեռքբերումը՝

Հ/հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր
1.	Ախտահանիչ նյութեր (քլորհեքսիդին 5%)	Բաց դարչնագույն հեղուկ, օրգանական լուծիչների՝ կերոսինի, սկիբիդարի 5%-ոց լուծույթ: Փաթեթավորումը՝ մինչև 20լ-ոց գործարանային տարաներով:
2.	Ախտահանիչ նյութեր (Քլոր պարունակող ախտահանիչ ինքնալուծվող հաբեր)	Ախտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ (մինչև 84%) ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ՝ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ: Հաբը կշռում է 3.5/+-0.2/գրամ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5-1,65գ ակտիվ քլոր: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցի պիտանելիության ժամկետը փակ վիճակում 6 տարի է: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը՝ 5 օր /ճիշտ

		պահպանման դեպքում/: Ախտահանիչ միջոցը ցուցաբերում է հակամիկրոբային ազդեցություն գրամդրական և գրամբացասական բակտերիաների(ներառյալ տուբերկուլյոզի,ներհիվանդանոցային վարակների,անաէրոբ և հատուկ վտանգավոր ինֆեկցիաների՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, տուլյարեմիա), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտներ), վիրուսների (այդ թվում՝ պոլիոմիելիտ, ՄԻԱՎ, հեպատիտներ, թռչնի գրիպ, ատիպիկ թոքաբորբ, ադենովիրուս և այլն): Տարբեր վարակների դեպքում ախտահանումը պահանջում է է տարբեր ռեժիմներ: N 100 կամ այլ փաթեթավորումով տուփ:
3.	Ախտահանիչ նյութեր (Բենզալկոնիում քլորիդ 50%)	Անգույնից մինչև դեղին գույնի, թույլ սպեցիֆիկ հոտով հեղուկ, 50% ալկիլի լուծույթ դիմեթիլ բենզիլ ամինային քլորիդը ջրում: Փաթեթավորումը՝ մինչև 20լ-ոց գործարանային տարաներով:
4.	Ախտահանիչ նյութեր (Ֆորմալին 40%)	Ֆորմալդեհիդի 35-40%-ոց լուծույթ, 20-50լ-ոց պլաստմասե տարայով:
5.	Ախտահանիչ նյութեր	**Պրեսեպտ գրանուլա 500գ. կամ համարժեք** Որպես ազդող նյութ իր մեջ պարունակում է դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ 50% քանակությամբ,նատրիումի հիդրոկարբոնատ ադիպինաթթու, 500գ-ոց գրանուլաներ են, որոնցում ակտիվ քլորի պարունակությունը 27,9%-ից ոչ պակաս: Գրանուլները չեն նոսրացվում ջրով,օգտագործվում են կենսաբանական հեղուկների արագ եվ չոր ախտահանման համար, որի ընթացքում հեղուկը վերածվում է գելանման զանգվածի.
6.	Ախտահանիչ նյութեր	**Պրեսեպտ 5 գ N100 կամ համարժեք** Ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որը կազմում է հաբի քանակության 50%-ը: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի՝ դիքլորիզոցիանի նատրումական աղի քանակը 2,5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է ոչ պակաս 1,75գ ակտիվ քլոր: Հաբերը ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի ակտիվության պահպանման ժամկետը ոչ պակաս, քան 5 օր: Աշխատանքային

		լուծույթի մինիմալ ծավալը ոչ ավել, քան 2,5լիտր է: Ունի ISO և EU գրանցման հավաստագրեր:
7.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեքս կամ համարժեք** Երկկոմպոնենտ համակարգ է բաղկացած հեղուկ և փոշի բաղադրիչներից:Հեղուկ բաղադրիչը անգույն է,թափանցիկ, սպեցիֆիկ հոտով ,ազդող նյութը գլյուտար ալդեհիդի 2.2-2.7%-ոց ջրային լուծույթն է, PH-ը 3.0-4.5: Իսկ փոշենման բաղադրիչը (ակտիվատոր) գտնվում է առանձին տարայի մեջ, բաց դեղնավուն գույնի մանր դիսպերսային փոշի է, որը պարունակում է կոռոզիան ընկճող հիմնային բաղադրիչ և ներկանյութ: Հեղուկ բաղադրիչը մինչև 5 լ տարաներով: Ազդող նյութ է համարվում գլուտար ալդեհիդը: Պատրաստի աշխատանքային լուծույթը ստացվում է հեղուկ և փոշի բաղադրիչների խառնումից, չի պահանջում նոսրացում ջրով: Աշխատանքային լուծույթը բազմակի օգտագործման համար է՝ ոչ ավել, քան14 օր: Ունի ISO և EU << գրանցման հավաստագրեր: Ախտահանիչը պետք է երաշխավորված լինի Օլիմպուս, Շտորց, Պենտաքս կամ այլ բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից:
8.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեքս ՕՊԱ կամ համարժեք** 0.55% օրթոֆտալատ ալդեհիդի լուծույթ, բաց երկնագույն թույլ հոտով հեղուկ PH-ը 7.4-7.6: Մինչև 5 լ տարողությամբ տարաներով: Պատրաստի լուծույթ է հակակոռոզիչ բաղադրամասերով, չի պահանջում նոսրացում ջրով: Աշխատանքային լուծույթը բազմակի օգտագործման համար է ոչ ավել, քան14 օր: Ախտահանման ժամանակը ոչ ավել, քան 12 րոպե է, բարձր մակարդակի ախտահանման ժամանակ ոչ ավել, քան 5 րոպե: Ունի ISO և EU << գրանցման հավաստագրեր: Ախտահանիչը պետք է երաշխավորված լինի Օլիմպուս, Շտորց, Պենտաքս կամ այլ բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից:
9.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեզիմ կոնցետրատ 5լ կամ համարժեք** Ազդող նյութ է հանդիսանում սուբտիլիզին բակտերիալ պրոտեազա ֆերմենտը: Ունի չեզոք pH = 6,0 - 8,0: Օգտագործվում է 0,8% և 1,6%

		աշխատանքային լուծույթները: Համատեղելի է ցանկացած նյութից պատրաստված բժշկական նշանակության բոլոր պարագաների հետ՝ օրգանական և անօրգանական աղտոտվածությունները հեռացնելու նպատակով: Աշխատանքային լուծույթով բժշկական նշանակության պարագաների մշակումը տևում է 1 -15 րոպե: Ունի ISO և EU հավաստագրեր:
10.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեզիմ Էքստրա կամ համարժեք** հեղուկ կոնցետրատ, ակտիվ ազդող նյութերն են ֆերմենտների կոմպլեքսը՝ սուբտիլիզին՝ բակտերիալ պրոտեազա, ամիլազա, լիպազա, ցելյուլազա, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ: Միջոցի ph= 7,8-8,8: Փաթեթավորված է 3,8 լ պլաստմասե տարաներում: Մշակման ժամանակը ոչ ավելի, քան 5 րոպե: Օգտագործվում է ոչ ավել քան 0,5- 0,8% աշխատանքային լուծույթները: Համատեղելի լինի կլինիկայում տեղադրված Endocleans սարքավորման հետ:
11.	Ախտահանիչ նյութեր	**Օկտենիդերմ 1000մլ կամ համարժեք** Թափանցիկ, անգույն հեղուկ:Պարունակում է 2-պրոպանոլ-45%, 1-պրոպանոլ 30%, օկտենիդին դիհիդրոքլորիդ 0,1%: Նախատեսված է վիրահատական միջամտություններից առաջ մաշկը ախտահանելու համար: Փաթեթավորված է 1000 մլ տարողությամբ պոլիէթիլենային շշերով: Ֆիրմայի նշան: Պայթունավտանգ պահել փակ 5 աստ. C-ից +30աստ C ջերմաստիճանում:

3. Ընկերությունը 23.05.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժիններով գրված անվանումները պատկանում են միայն ու միայն «Ջոնսոն և Ջոնսոն Մեդիքալ» ՍՊԸ-ի բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին, իսկ նշված կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունները պատկանում են միայն այդ բրենդային անվանումներն ունեցող ախտահանիչ միջոցներին, որոնք չեն հանդիպում այլ ֆիրմաների համարժեք ախտահանիչ միջոցների մոտ:

Պատվիրատուն Հավելված 1-ի «Ապրանքի անվանում»-ը սյունակում թիվ 2-րդ չափաբաժնի համար գրել է միայն «Ախտահանիչ նյութեր (բլոր պարունակող ախտահանիչ

ինքնալուծվող հաբեր)» բառերը, իսկ նույն հավելվածի «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում չի գրել ոչ մի անվանում՝ «կամ համարժեք» նշումով, սակայն նշված կոնկրետ թվային մեծությունների համադրումը՝ ՀՀ շուկայում առկա համանման և համարժեք ախտահանիչ միջոցների համապատասխան հատկանիշների թվային մեծությունների հետ, փաստում է, որ Պատվիրատուի կողմից թիվ 2-րդ չափաբաժնով պահանջված ապրանքը կոնկրետ համապատասխանում է 2016թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ առողջապահության նախարարության թիվ 2991-Ա հրամանով հաստատված օգտագործման հրահանգ ունեցող՝ ՌԴ «Ալ-Դեզ» Քիմգործարան ՍՊԸ-ի կողմից արտադրվող «Ժավել Աբսոլյուտ» ախտահանիչ միջոցին:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 23.05.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, ՀՀ պաշտպանության նախարարության 26.05.2017թ. թիվ ԴՎԱ/1543 գրությունը, Ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1.Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ,

2) ***գնումների և գնուների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:***

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի ***միասնական կանոններով, մրցակցային,*** թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով*** կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն (...)»:

Օրենք 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Գնման առարկայի բնութագրերը»՝

1) պետք է մրցակցության ***հավասար պայմաններ*** ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված ***խոչընդոտների առաջացմանը.***

3) պետք է լինեն ***օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.***

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալ ախտահանիչ նյութերի ձեռքբերումը՝

Հ/հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր
1.	Ախտահանիչ նյութեր (քլորհեքսիդին 5%)	Բաց դարչնագույն հեղուկ, օրգանական լուծիչների՝ կերոսինի, սկիբիդարի 5%-ոց լուծույթ: Փաթեթավորումը՝ մինչև 20լ-ոց գործարանային տարաներով:
2.	Ախտահանիչ նյութեր (Քլոր պարունակող ախտահանիչ ինքնալուծվող հաբեր)	Ախտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ (մինչև 84%) ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ՝ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ: Հաբը կշռում է 3.5/+-0.2/գրամ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5-1,65գ ակտիվ քլոր: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցի պիտանելիության ժամկետը փակ վիճակում 6 տարի է: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը՝ 5 օր /ճիշտ պահպանման դեպքում/: Ախտահանիչ միջոցը ցուցաբերում է հակամիկրոբային ազդեցություն գրամդրական և գրամբացասական բակտերիաների(ներառյալ տուբերկուլյոզի,ներհիվանդանոցային

		վարակների,անաէրոբ և հատուկ վտանգավոր ինֆեկցիաների՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, տուլյարեմիա), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտներ), վիրուսների (այդ թվում՝ պոլիոմիելիտ, ՄԻԱՎ, հեպատիտներ, թռչնի գրիպ, ատիպիկ թոքաբորբ ադենովիրուս և այլն): Տարբեր վարակների դեպքում ախտահանումը պահանջում է է տարբեր ռեժիմներ: N 100 կամ այլ փաթեթավորումով տուփ:
3.	Ախտահանիչ նյութեր (Բենզալկոնիում քլորիդ 50%)	Անգույնից մինչև դեղին գույնի, թույլ սպեցիֆիկ հոտով հեղուկ, 50% ալկիլի լուծույթ դիմեթիլ բենզիլ ամինային քլորիդը ջրում: Փաթեթավորումը՝ մինչև 20լ-ոց գործարանային տարաներով:
4.	Ախտահանիչ նյութեր (Ֆորմալին 40%)	Ֆորմալդեհիդի 35-40%-ոց լուծույթ, 20-50լ-ոց պլաստմասե տարայով:
5.	Ախտահանիչ նյութեր	**Պրեսեպտ գրանուլա 500գ. կամ համարժեք** Որպես ազդող նյութ իր մեջ պարունակում է դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ 50% քանակությամբ,նատրիումի հիդրոկարբոնատ ադիպինաթթու, 500գ-ոց գրանուլաներ են, որոնցում ակտիվ քլորի պարունակությունը 27,9%-ից ոչ պակաս: Գրանուլները չեն նոսրացվում ջրով,օգտագործվում են կենսաբանական հեղուկների արագ եվ չոր ախտահանման համար, որի ընթացքում հեղուկը վերածվում է գելանման զանգվածի.
6.	Ախտահանիչ նյութեր	**Պրեսեպտ 5 գ N100 կամ համարժեք** Ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որը կազմում է հաբի քանակության 50%-ը: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի՝ դիքլորիզոցիանի նատրումական աղի քանակը 2,5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է ոչ պակաս 1,75գ ակտիվ քլոր: Հաբերը ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի ակտիվության պահպանման ժամկետը ոչ պակաս, քան 5 օր: Աշխատանքային լուծույթի մինիմալ ծավալը ոչ ավել, քան 2,5լիտր է: Ունի ISO և EU գրանցման հավաստագրեր:
7.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեքս կամ համարժեք**

		Երկկոմպոնենտ համակարգ է բաղկացած հեղուկ և փոշի բաղադրիչներից:Հեղուկ բաղադրիչը անգույն է,թափանցիկ, սպեցիֆիկ հոտով ,ազդող նյութը գլյուտար ալդեհիդի 2.2-2.7%-ոց ջրային լուծույթն է, PH-ը 3.0-4.5: Իսկ փոշենման բաղադրիչը (ակտիվատոր) գտնվում է առանձին տարայի մեջ, բաց դեղնավուն գույնի մանր դիսպերսային փոշի է, որը պարունակում է կոռոզիան ընկճող հիմնային բաղադրիչ և ներկանյութ: Հեղուկ բաղադրիչը մինչև 5 լ տարաներով: Ազդող նյութ է համարվում գլուտար ալդեհիդը: Պատրաստի աշխատանքային լուծույթը ստացվում է հեղուկ և փոշի բաղադրիչների խառնումից, չի պահանջում նոսրացում ջրով: Աշխատանքային լուծույթը բազմակի օգտագործման համար է՝ ոչ ավել, քան14 օր: Ունի ISO և EU << գրանցման հավաստագրեր: Ախտահանիչը պետք է երաշխավորված լինի Օլիմպուս, Շտորց, Պենտաքս կամ այլ բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից:
8.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեքս ՕՊԱ կամ համարժեք** 0.55% օրթոֆտալատ ալդեհիդի լուծույթ, բաց երկնագույն թույլ հոտով հեղուկ PH-ը 7.4-7.6: Մինչև 5 լ տարողությամբ տարաներով: Պատրաստի լուծույթ է հակակոռոզիչ բաղադրամասերով, չի պահանջում նոսրացում ջրով: Աշխատանքային լուծույթը բազմակի օգտագործման համար է ոչ ավել, քան14 օր: Ախտահանման ժամանակը ոչ ավել, քան 12 րոպե է, բարձր մակարդակի ախտահանման ժամանակ ոչ ավել, քան 5 րոպե: Ունի ISO և EU << գրանցման հավաստագրեր: Ախտահանիչը պետք է երաշխավորված լինի Օլիմպուս, Շտորց, Պենտաքս կամ այլ բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից:
9.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեզիմ կոնցետրատ 5լ կամ համարժեք** Ազդող նյութ է հանդիսանում սուբտիլիզին բակտերիալ պրոտեազա ֆերմենտը: Ունի չեզոք ph = 6,0 - 8,0: Օգտագործվում է 0,8% և 1,6% աշխատանքային լուծույթները: Համատեղելի է ցանկացած նյութից պատրաստված բժշկականական նշանակության բոլոր պարագաների հետ՝ օրգանական և անօրգանական աղտոտվածությունները հեռացնելու

		նպատակով: Աշխատանքային լուծույթով բժշկական նշանակության պարագաների մշակումը տևում է 1 -15 րոպե: Ունի ISO և EU հավաստագրեր:
10.	Ախտահանիչ նյութեր	**Սայդեզիմ Էքստրա կամ համարժեք** հեղուկ կոնցետրատ, ակտիվ ազդող նյութերն են ֆերմենտների կոմպլեքսը՝ սուբտիլիզին՝ բակտերիալ պրոտեազա, ամիլազա, լիպազա, ցելյուլազա, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ: Միջոցի ph= 7,8-8,8: Փաթեթավորված է 3,8 լ պլաստմասե տարաներում: Մշակման ժամանակը ոչ ավելի, քան 5 րոպե: Օգտագործվում է ոչ ավել քան 0,5- 0,8% աշխատանքային լուծույթները: Համատեղելի լինի կլինիկայում տեղադրված Endocleans սարքավորման հետ:
11.	Ախտահանիչ նյութեր	**Օկտենիդերմ 1000մլ կամ համարժեք** Թափանցիկ, անգույն հեղուկ:Պարունակում է 2-պրոպանոլ-45%, 1-պրոպանոլ 30%, օկտենիդին դիհիդրոքլորիդ 0,1%: Նախատեսված է վիրահատական միջամտություններից առաջ մաշկը ախտահանելու համար: Փաթեթավորված է 1000 մլ տարողությամբ պոլիէթիլենային շշերով: Ֆիրմայի նշան: Պայթունավտանգ պահել փակ 5 աստ. C-ից +30աստ C ջերմաստիճանում:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում ***թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժիններով գրված անվանումները պատկանում են միայն ու միայն «Ջոնսոն և Ջոնսոն Մեդիքալ» ՍՊԸ-ի բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին***, իսկ նշված կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունները պատկանում են միայն այդ բրենդային անվանումներն ունեցող ախտահանիչ միջոցներին, որոնք ***չեն հանդիպում այլ ֆիրմաների համարժեք ախտահանիչ միջոցների մոտ***:

Պատվիրատուն Հավելված 1-ի «Ապրանքի անվանում»-ը սյունակում թիվ 2-րդ չափաբաժնի համար գրել է միայն «Ախտահանիչ նյութեր (քլոր պարունակող ախտահանիչ ինքնալուծվող հաբեր)» բառերը, իսկ նույն հավելվածի «Տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակում չի գրել ոչ մի անվանում՝ «կամ համարժեք» նշումով, սակայն նշված կոնկրետ թվային մեծությունների համադրումը՝ << շուկայում առկա համանման և համարժեք

ախտահանիչ միջոցների համապատասխան հատկանիշների թվային մեծությունների հետ, փաստում է, որ Պատվիրատուի կողմից թիվ ***2-րդ չափաբաժնով պահանջված ապրանքը*** կոնկրետ ***համապատասխանում է*** 2016թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ առողջապահության նախարարության թիվ 2991-Ա հրամանով հաստատված օգտագործման հրահանգ ունեցող՝ ՌԴ «Ալ-Դեզ» Քիմգործարան ՍՊԸ-ի կողմից արտադրվող ***«Ժավել Աբսոլյուտ» ախտահանիչ միջոցին***:

Խորհուրդը արձանագրում է, որ Ընթացակարգի Հրավերի պայմանագրին կից Հավելված թիվ 1-ով՝ տեխնիկական բնութագրով, սահմանված ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգների ուսումնասիրությունից երևում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված են ախտահանիչ միջոցների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են կոնկրետ «Ջոնսոն և Ջոնսոն Մեդիքալ» ՍՊԸ-ի և այլ բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից Հավելված թիվ 1-ի՝ տեխնիկական բնութագրի, թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինները, վերը նշված ձևով՝ կոնկրետ տվյալներ սահմանելով, խախտել է Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման առարկայի բնութագրերը կազմելու պահանջները, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 23.05.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ախտահանիչ և լաբորատոր նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ

ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ